

## ՈԱԶՄԻԿ ՄԱՐԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

### ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱՈՐԴՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում հանգամանորեն վերլուծության են ենթարկվում Դավիթ Ալավկաորդու «Կանոնական օրինադրությունների» վերաբերյալ հարցերը: Դավթի այս օրինադրությունները իրավական ուժ ունեն, որի մասին վկայում են այդ ժամանակի պատմիչները և մեզ հասած բազմաթիվ ձեռագրերը: Այդ օրինադրությունների իրավական ուժ ունենալու մասին վկայում են նաև հսկայական քանակությամբ պահպանված ձեռագրերը:

*Հիմնարարներ- կանոնական իրավունք, կանոնական օրինադրություններ, ընդհանուր իրավունք, օրենք, ամուսնություն, հանցագործություն, պատիժ:*

Ինչպես նշել ենք, հայ կանոնական իրավունքի բաղկացուցիչ մասն են կազմում նաև Դավթ Ալավկաորդու կանոնները և Ներսես Շնորհալու կանոնական որոշումները: Դավթ Ալավկաորդին միջնադարյան Հայաստանի հայտնի մատենագիր և եկեղեցական գործիչներից մեկն է, որը հայ իրականության մեջ կատարեց առաջին աշխարհիկ համակարգված օրենսդրություն ստեղծելու փորձը, թեպետև իր երկը կոչվում է «Կանոններ» կամ «Կանոնական օրինադրություններ»: Այն համարվել է «պիտանացու» ոչ միայն իր ժամանակաշրջանի համար, այլև նույնիսկ 13-րդ դարում: Դրա հիմնական պատճառն այն է, որ Դավթի «Կանոնների» բովանդակությունը սերտորեն աղերսված է ժամանակաշրջանի իրականության հետ և արտահայտված է դյուրըմբռնելի ձևով: Նկատի ունենալով այդ երկի գործնական կիրառական նշանակությունը՝ ուսումնասիրողները (Խ. Սամվելյան, Մ. Աբեղյան) այն, իրավամբ, դասել են հայոց ազգային դատաստանագրքերի շարքը:

Ըստ պատմիչների հաղորդած տվյալների՝ Դավթ Ալավկաորդին ծնվել է 11-րդ դարի 70-80-ական թվականներին Գանձակ քաղաքում, մահացել է 1139 կամ 1140 թվականին: Դավթին իր ժամանակի կրթված մարդկանցից էր և երկար ժամանակ զբաղվել է մանկավարժությամբ: Ըստ Վարդան պատմիչի վկայության՝ Դավթ Ալավկաորդին «լծակից» է հանդիսացել Հովհաննես Սարկավազ Իմաստասերին<sup>2</sup>, որից կարելի է ենթադրել, որ նրանք կամ միասին սովորել են Հաղպատի վանքում և կամ միասին պաշտոնավարել Անի քաղաքում:

Թե որքան մեծ հեղինակություն է վայելել Դավթ Ալավկաորդին իր ժամանակակիցների կողմից, կարելի է դատել այն փաստից, որ նա Գրիգոր վար-

դապետի հետ միասին միջնորդել է Ամենայն հայոց կաթողիկոսության առաջ, որն այն ժամանակ գտնվում էր Կիլիկիայում, որպեսզի Աղվանից կաթողիկոսական գահի վրա հաստատվի Գագիկ եպիսկոպոսը<sup>3</sup>:

Այսպիսով, լինելով իր ժամանակի ուսյալ մարդկանցից, ինչպես նաև երկրի հասարակական-քաղաքական կյանքի մասնակիցներից մեկը, Դավթ Ալավկաորդին խորապես մտահոգվել է իր ժողովրդի ոչ միայն հոգևոր-մշակութային հարցերով, այլ նաև առօրյա հասարակական հարաբերությունների կանոնակարգման, որոշակի կարգուկանոն հաստատելու հիմնախնդրով, ստեղծել հայ իրականության մեջ առաջին աշխարհիկ համակարգված «Կանոնական օրինադրությունները»:

Դավթի «Կանոնների» ձեռագրերի թիվը հասնում է 17-ի, որոնցից 15-ը գտնվում է Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում՝ Մատենադարանում, մեկը՝ Վենետիկի, մյուսը՝ Վիեննայի Մխիթարյանների մոտ<sup>4</sup>:

«Կանոնական օրինադրությունները» բաղկացած են 97 կանոններից, որոնք կարգավորում են քաղաքացիական, աշխատանքի պաշտպանության, ամուսնաընտանեկան և քրեաիրավական հարաբերությունների որոշակի բնագավառը: Կանոնների զգալի մասը վերաբերում է նաև այնպիսի հարցերի, որոնք կենցաղային մաքրակեցության տեսանկյունից ժամանակի հասարակության համար կարևոր են եղել. օրինակ՝ «մկնանկ» սննդի մասին կանոնները: Դավթի կանոնները կարևոր սկզբնաղբյուր են ինչպես հայ իրավունքի պատմության, այնպես էլ միջնադարյան Հայաստանի վարք ու բարքի, հասարակական-քաղաքական և իրավական ուսմունքների պատմության համար:

«Կանոնների» քննությամբ զբաղվել են ինչպես

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

հայ, այնպես էլ եվրոպացի պատմաբաններն ու բանասերները, իրավաբաններն ու բժշկագետները: Ուսումնասիրողների տեսակետները կանոնների բնույթի, բովանդակության վերաբերյալ բաժանվում են երկու իրարամերժ կարծիքների: Գիտնականներից ոմանք՝ Մ. Չամչյանը<sup>5</sup>, Նոյմանը<sup>6</sup>, Չարբհանայանը<sup>7</sup>, Տաշյանը<sup>8</sup>, գտնում են, որ Դավթի կանոններն, ըստ էության, առանձին արժեք չեն ներկայացնում և, Չամչյանի արտահայտությամբ, «խառնիխուռն և անիմաստ բաներ են»:

Վերոհիշյալ հեղինակների կարծիքները ջանացել են հերքել անվանի հայագետներ Կ. Կոստանյանը<sup>9</sup>, Գ. Ալիշանը<sup>10</sup>, Մանուկ Աբեղյանը<sup>11</sup>, իրավաբաններ Խ. Սամուելյանը<sup>12</sup>, Ա. Սուքիասյանը<sup>13</sup>, Ա. Թովմասյանը<sup>14</sup>, Խ. Թորոսյանը<sup>15</sup>:

Չհամաձայնվելով Չամչյանի, Նոյմանի, Չարբհանայանի տեսակետներին՝ Ա. Թովմասյանը նշում է. «Իրականում Դավթի Ալավկատրոյու կանոնները որոշակի հետաքրքրություն ներկայացնող, սիստեմի բերված կանոններ են և նրանց մեջ խառնիխուռն ու անպետք ոչինչ չկա, մանավանդ երբ այդ կանոնները քննության են առնվում իրենց գրելու ժամանակաշրջանի տնտեսական և հասարակական-քաղաքական պայմանների ֆոնի վրա»<sup>16</sup>:

Մենք հպանցիկ նշեցինք Դավթի Ալավկատրոյու և նրա «Կանոնների» մասին մեզ հասած սկզբնաղբյուրները և ուսումնասիրությունները: Սակայն նշված հեղինակներից ոչ ոք այդ կանոնները հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձրել, այլ բավարարվել են այնքանով, որքանով որ այն աղերսվել է իրենց հետազոտման առարկայի հետ: Ներկա հետազոտությունը մի փորձ է՝ պարզաբանելու Դավթի հասարակական-քաղաքական և իրավական հայացքները, որոնք արժարժված են քաղաքացիական, ամուսնաընտանեկան և քրեաիրավական նորմերում:

Կանոնների հիմնական աղբյուրներն են սովորութական իրավունքը, Հին և Նոր կտակարանները, հատկապես Մովսես Մարգարեի Հին կտակարանի հայտնի Հնգամատյանը և հայ կանոնական (եկեղեցական) իրավունքը: Բացի վերը նշված աղբյուրներից, մա ուսումնասիրել և օգտագործել է հայ մատենագիրների, հատկապես փիլիսոփաների աշխատությունները, որոնք իրենց ազդեցությունն են թողել նրա աշխարհայացքի ձևավորման վրա:

«Կանոնական օրինադրությունները» բաղկացած են «Նախադրություն»-ից և 97 կանոններից: Նախադրությունում հեղինակը մեծարում է իր

պատվիրատուին և նշում, որ «անխառնապէս, միատեսակ» մտքով շարադրել է իր «Կանոնները»՝ «Ֆի սատարութիւն բանասիրաց, իր գործնական քաղաքավարութիւն տնտեսիկնեալ», այսինքն՝ նկատի ունի նաև ամենից առաջ «Կանոնների» գործնական, կիրառական ունակությունը, որը պետք է բավարարեր առօրյա իրավական պահանջները:

Յուրացնելով հայ մատենագիտական, այդ թվում և փիլիսոփայական ժառանգությունը՝ Դավթի Ալավկատրոյին իր կանոններում արժարժած իրավաքաղաքական մի շարք հարցերի մեկնաբանումը աղերսում է մարդու կամքի ազատության և, ամենից առաջ, բարու՝ որպես սուբստանցիա, և չարի՝ որպես ոչ սուբստանցիա, հասկացությունների հետ: Այսպես, խոսելով բարի և չար հասկացությունների մասին՝ Դավթի Ալավկատրոյին նշում է. «Բանգի Աստուած բարի է եւ ամենայն տուրք բարիք ...Եւ զի սկզբնատիպ բարոյ է Աստուած, ի բարոյբարի ստեղծման արարածք, որպէս ի լուսոյ՝ լոյս: Եւ ետես Աստուած զլոյսն զի բարի է: Եւ ահա բարի են յոյժ ամենայն, եւ չիք ինչ ի նոսա խոտան ըստ բնութն» (Ա կանոն): Ինչպես տեսնում ենք, չարիքը, ըստ հեղինակի, սուբստանցիա չէ, քանզի Աստված ի սկզբանե բարի է: Այսպիսով, չարիքը Աստծուց չի գալիս և ոչ էլ բնությունից, որովհետև ոչ մի չար բան չի կարող առաջանալ բարերար Աստծուց և ոչ էլ նյութից, որովհետև ի սկզբանե ոչ մի բան գոյություն չունի<sup>17</sup>:

Ուրեմն չար արարքների աղբյուրը պետք է փնտրել մարդու գործողությունների մեջ, քանի որ մարդն օժտված է կամքի ազատությամբ և, հետևաբար, ազատ է կատարել բարի կամ չար արարք: Ճիշտ նույնպես և Եզնիկ Կողբացին. «... չարիքը որոնում է բացառապես բանականությամբ օժտված միակ էակի՝ մարդու գործողություններում. մա մարդուն է վերագրում նրա կամքի բարի և չար դրսևորումը»<sup>18</sup>:

Մարդու կամքի ազատության, բարի և չար արարքների մեկնաբանման վերոնշված տեսակետից Դավթի Ալավկատրոյին հյուսում է իր իրավաքաղաքական գաղափարները, որոնք ևս արտահայտել է ամուսնաընտանեկան, քաղաքացիական, աշխատանքի պաշտպանության, ավատատիրական օրինականության և քրեաիրավական կանոններում: Ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորող կանոնների թիվը հասնում է մոտ 25-ի: Կանոնական և սովորութական իրավունքի վրա հիմնված այդ կանոնները կարգավորում են ամուսնության պայմաններն ու կարգը, ամուսինների փոխհարաբերությունները, ամուսնալուծության

և հարակից այլ հարցեր: Պետք է նշել, որ կանոններում բացակայում են ամուսինների, ծնողների և զավակների գույքային հարաբերությունները կարգավորող նորմերը, ինչպես նաև խնամակալության, հոգաբարձության և որդեգրման ինստիտուտներին վերաբերող կանոնները:

Ամուսնաընտանեկան կանոններում Դավիթ Ալավկատրոյին արտահայտել է մի շարք առաջադիմական գաղափարներ, որոնց ակունքները հասնում են մինչև 5-րդ դար, սակայն ուսումնասիրվող դարաշրջանում և դրանից հետո այդ գաղափարները ոչ միայն չէին կորցրել իրենց հասարակական հնչեղությունը և կենսական ուժը, այլև պահանջվում էր դրանց վերստին սանկցիավորումը և օրենսդրական ամրագրումը:

Ըստ Դավիթ Ալավկատրոյի՝ ամուսնությունը պետք է լինի փոխադարձ համաձայնությամբ (փոխադարձ հաճութեամբ). «... առանց հարկի տեսանի մի՛ պսակեցե՛ք» (հե կանոն): Հիրավի, այս նորմը իր ժամանակաշրջանի համար չափազանց առաջադիմական իրավանորմ էր, որի նշանակությունը և կարևորությունը ամուսնաընտանեկան հարաբերությունների կարգավորման բնագավառում ակնհայտ է:

Ինչպես նշել ենք, հայ իրականության մեջ դա նորություն չէր: Դեռ առաջին հայ հայրապետների և եկեղեցական ժողովներում ընդունված կանոններում բազմիցս շեշտվել է, որ ամուսնությունը պետք է լինի փոխադարձ համաձայնության («հաճութիւն») հիման վրա, հակառակ դեպքում այն համարվում էր անվավեր<sup>19</sup>:

Ինչ խոսք, հիշյալ իրավանորմը, ամենայն հավանականությամբ, բազմիցս ոտնահարվել է առօրյա կյանքում, և հենց դա է պատճառ հանդիսացել, որ Դավիթ Ալավկատրոյին, վերստին սահմանելով այդ նորմը, կամեցել է այն բարձրացնել օրենքի աստիճանի և դրանով իսկ պարտադիր դարձնել հայ իրականության մեջ:

Քրիստոնեությունն ընդհանրապես և հայ կանոնական իրավունքը մասնավորապես ամուսնությունը համարել են աստվածային հաստատություն և ձևավորել ամուսինների «ցկեանս միութեան» գաղափարը. «Չոր Աստուած զուգեաց մարդ, մի մեկնեցե՛ք» (Մատ. ԺԹ, 6): Աստվածաշնչի այս պատվիրանը բառացիորեն կրկնում է Դավիթ Ալավկատրոյին իր Հ կանոնում. «Չդիւահար կին չէ պաւտթողուլ, զի որ Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեցե՛ք»: Այսինքն՝ կանոնագիրը նույնպես ընդունում է ամուսնության «ցկյանս միության» գաղափարը և, միաժամանակ, ելնելով այդ գաղափարից,

սահմանափակում է անհիմն ամուսնալուծությունները: Այստեղից կարելի է եզրակացնել, որ նա մեծ նշանակություն է տալիս կայուն և համերաշխ ընտանիքների գոյությանը: Ամենից առաջ այդ հանգամանքը նկատի ունի կանոնագիրքը, երբ սահմանում է ամուսնության մյուս կանոնները ամուսնացող զույգերը պետք է որոշակի տարիքի լինեն, այնպիսի տարիքի, որ տարբերեն իրենց «աջն ու ձախը», այսինքն՝ գիտակցեն իրենց կատարած քայլի նշանակությունը. «Այլ զփոքրագոյն մանկանս մի որ ի քահանայից յանձն առցէ հարսանեաց պսակ դնել նոցա մինչև յերկոտասան ամին, որ ճանաչեն զաջն ու զահեակն» (ԴԲ կանոն):

Դավիթ Ալավկատրոյին, ինչպես նշեցինք, դեմ էր անհիմն ամուսնալուծություններին: Հատկանշական է, որ նա այդ իսկ առթիվ, հետևելով կանոնական իրավունքին<sup>20</sup>, չբերությունը (ամլությունը) չի համարում որպես ապահարգանի օրինական հիմք (տես Հ կանոնը):

Մեծ նշանակություն տալով դաստիարակչական և բարոյակրթական հարցերին՝ կանոնագիրքը սահմանում է երեխաների ձրի ուսուցման կարգը. «Այլ քահանայ, վանական կամ աշխարհական, որք զմանկունս վարձու առնուն յուսումն, վաճառ և զին դնեն Աստուածայ շնորհացս», ապա այդպիսի քահանաները պետք է. «... լուծցինի կարգէն»: Միայն կամավոր նվիրատվությունները կարելի է վերցնել, սակայն, եթե «... տրտնջալով տացեն, մի առնուցուն ի նոցանէ» (ԼԷ կանոն): Այդ հիրավի առաջադիմական գաղափարը նույնպես հայ հասարակական-քաղաքական կյանքում<sup>21</sup> նորություն չէր, սակայն հիշյալ գաղափարն իրավական կադապարի մեջ առնելով՝ նա ձգտել է բարձրացնել նորմի (որը, հավանաբար, հաճախակի էր ոտնահարվում) նշանակությունը և պարտադրել դրա կիրառումն առօրյա կյանքում:

Կանգնած լինելով ավատատիրական իրավակարգի և օրինականության դիրքերում՝ Դավիթ Ալավկատրոյին միաժամանակ խստորեն դատապարտում է ավատատիրական հասարակարգի հոռի կողմերը և չափն անցած ավատատերերին, մասնավորապես վաշխառուներին, որոնք «վաշխ» են գանձում: Այդպիսիներին նա հավասարեցնում է ավազակների և գողերի հետ. «... վաշխառուն ևս վաշկատուն կցորդ է ամենայն ավազակաց, որ ի լեռինս կողոպտեն, եւ որմափոր գողոցն եւ կծծեաց, եւ որ տնանկացուցանեն ել աղքատացուցանեն զմարդիկ, զի բնութեամբ ինքեանք մարդիկ են, բայց չար սովորութեամբ զազւսնք են եւ ոչ մարդիկ: Չի հնա-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

րին տալ զոսկին, ածին բնութեամբ եւ վաշխին ծնունդ պահանջեն, որ չար է, քան բռնաբար պտուղ առնուլ, սա ի սատանայէ շահաւեր ուսոյց գմարդիկ եւ զրկող, կողոպտող եւ յավշտակող» (ՁԳ կանոն):

Գավիթ Ալավկատրոյին սահմանել է նաև աշխատանքի պաշտպանության կանոններ: Այսպես, Գ կանոնի համաձայն՝ տերը պարտավոր է կատարելիք աշխատանքի համար ծառային ծանոթացնել գործի հանգամանքների հետ և դրանով իսկ զերծ պահել դժբախտ պատահարից: Հակառակ դեպքում, եթե ծառային դժբախտ դեպք պատահի, ապա նրա տերը լիովին պատասխանատվություն է կրում: Ահա այդ կանոնը. «... այլ եթե ի գործս իրեանց եկեցէ որոգայթ մահու, անպարտք են տիարք նորա, մանավանդ այնորիք, որ զպատրաստութեան պատուէրն հանապազ կացուցանեն ի լսելիս հնազանդելոց իրեանց, ապա թե հասարակ միաբանութեն սիրոյ ի խաղաղութեան մերոյ կանանց զընդդէմսն հրամայեն գործել տեսք ծառայից և անդ պատահիցէ ումենք մահ կամ սպանումն, մահապարտ է տէր նորա: Գարձեալ, եթէ ոք ի նոցանէ ծանուցանէ տեսն իւրոյ զվնաս նորա առաջիկայ եւ նա անհոգացեալ անպատրաստաբար առաքէ զնա ի գործն եւ պատահի զվնասն, յորմէ խիթայր, որ առաքեացն, արեամբ պարտ է: Իսկ եթէ ոք զայլ ոք որ ոչ իւր իցէ եւ առաքէ ի գործ իւր եւ անդ, որ որոգայթի, արեան պարտք է...» (Գ կանոն):

Կանոնագիրքը խստորեն արգելում է ինքնադատաստանը, իսկ ինքնադատաստան տեսնողներին համարում է իսկական հանցագործներ, «եթէ ոք զգող կամ ծնացող ըմբռնէ առ իւր կին կամ աղախին եւ սպանիցէ սպանող է: Չնոյն եթէ առ մայր կամ քոյր ըմբռնէ ի նոցանէ, թե սպանանէ, արեան պարտ է եւ սպանանիցէ»:

Ալավկատրոյին ժխտում է չար արարքի, ուրեմն և հանցագործության սուբստանցիոնալ գոյության գաղափարը («չարք ինչ ի նոսա խոտան ըստ բնութեան»), քանզի արարչագործությունից առաջ և մինչև Ադամի և Եվայի օրինազանցությունը ոչ մի չարիք գոյություն չի ունեցել (Ա կանոն): Այստեղից էլ չարիքը մարդու որոշակի բացասական գործողությունների հետևանք է, որը, որպես սոցիալական երևույթ, առաջացավ այն օրվանից, երբ մարդն իր ազատ կամքի շնորհիվ դարձավ անհնազանդ, օրինազանց: Հեղինակի այն բացատրությունը, թե հանցագործությունը ի վերուստ առաջացած երևույթ չէ, որ այն պայմանավորված է մարդկանց որոշակի գործողություններով ու պատճառներով (հարբեցողություն, ազահություն, նենգություն,

վրեժխնդրություն և այլն), իր ժամանակաշրջանի համար հանցագործության պատճառների գիտական մեկնաբանման փորձերից մեկն է:

Այդ կանոնները հանցագործության սուբյեկտ են ճանաչում միայն մարդուն, այն էլ՝ մեղսունակ և որոշակի տարիքի հասած: Այս դպրոցը շատ բնական է ներկայացնում արդի ժամանակաշրջանի դիրքերից, սակայն միջնադարում դա, ըստ էության, սոցիալ-իրավական տեսանկյունից առաջադիմական և արժեքային մոտեցում էր:

Կանոնական օրինադրություններում կենդանիների և անշունչ առարկաների՝ որպես հանցագործության սուբյեկտներ չճանաչելու փաստն իր արտահայտությունն է գտել հատկապես ԳԶ կանոնում, որտեղ մասնավորապես նշված է. «... եթէ դէպ լինեցի՝ ծառոյ անկանել մարդոյ եւ մեռանել, կամ խեղդով կախել զժառէ, չկայ ինչ մեղանս անկոյն, զի անշունչ եւ անզգայք են, ոչ ինչ եղեն պատճառ մահու նոցա, որ այնպէս պատահեաց», որովհետև անշունչ առարկաները և կենդանիները «ոչ թէ մեղականք են, այլ զի անաթք եղեն մեղականացն պղծութեան եւ սպանութեան»:

Ուրեմն անասուններին, անշունչ առարկաները պետք է ոչնչացնել՝ «պատժել», ոչ թե նրա համար, որ սրանք «մեղականք են», այլ որպես հանցագործության առարկաներ, որոնք ճակատագրի կամ պատահարի բերումով դարձել են այդպիսին: Մարդկանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցում Գավիթ Ալավկատրոյին դրել է սուբյեկտիվ մեղքը իր ձևերով՝ դիտավորություն («գիտութեամբ»), անզգույշ («անգիտութեան») և խառն:

Մեղքի հիշյալ ձևերն իրենց արտահայտությունն են գտել նրա մի շարք կանոններում, մասնավորապես՝ արդեն մեջբերված Գ կանոնում: Հիշյալ կանոնից հետևում է, որ, երբ մարդը նախատեսում է իր գործողության (կամ անգործության) հետևանքները, ապա նա պատասխանատվության է ենթարկվում որպես կանխամտածված, դիտավորությամբ սպանություն կատարող: Սակայն, երբ մարդը չի նախատեսում այդ հետևանքները, բայց պարտավոր է նախատեսել կամ օբյեկտիվորեն հնարավոր էր դրանց կանխատեսումը, ապա նա համարվում է անզգույշությամբ սպանություն կատարող: Իսկ երբ գործողության կամ անգործության ժամանակ մարդը չի նախատեսում հետևանքները և օբյեկտիվորեն անհնար է կանխատեսել այդպիսի հետևանքները, ապա մարդն ընդհանրապես պատասխանատվության չի ենթարկվում: Այլ կերպ ասած՝ այստեղ գործում է «չկա

մեղք, չկա նաև պատասխանատվություն» սկզբունքը:

Մարդուն քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է նաև, որ նրա գործողության կամ անգործության առաջացրած հետևանքի միջև լինի պատճառական կապ: Այդ ոգով է տոգորված Դավթի Բ կանոնը. «Այլ եթե մարդոյ լինի ջորի, խեռ, ձի լիցս ընկեց, կամ մարդակեր, կամ եզն հարկանող եւ անգիտասցէ եւ այլք ազդեսցէ նմա, բողոք բարձեալ զվնասն ցուցանիցեն, եւ նա յանհոգս գայցէ ոչ հնարեսցի զնա որպէս արժան է, սպանցէ գոք, տէր նորա մահապարտ է»: Այսինքն՝ անձը պատասխանատվության է ենթարկվում միայն այն դեպքում, երբ նրան ժամանակին զգուշացրել են իր կենդանիների գործողություններից բխող վտանգավոր հետևանքների մասին: Նման դեպքում անձի հանցավոր անտարբերության և առաջացած հետևանքի միջև առկա է պատճառական կապը: Հակառակ դեպքում քրեական պատասխանատվության մասին խոսք լինել չի կարող:

ԼԹ կանոնն ավելի հստակ կերպով է ազդարարում, որ, եթե անձի կատարած արարքի և առաջացած հետևանքի միջև պատճառական կապը բացակայում է, ապա անձն անմեղ է և պատասխանատվության չի ենթարկվում. «Այլ հայր մանկան զնացեալ իցէ առ զինընպուս կամ գործ ինչ եւ մա-

նուկ սորա անկատար դիմեալ առ հայր իւր եւ հեղձեալ ի զետ. զի ոչ զիտաց ի նոցանէ. անպատուհաս են վասն անգիտութեանն...», սակայն «... վասն արբեցութեան, զի եղեն պատճառ կորստեան մանկանն...», ենթակա են պատժի, ասել է թե արարքի և հետևանքի միջև եթե կա պատճառական կապ, ապա անձը պետք է պատասխանատվության ենթարկվի:

Դավթին իր կանոններում շարադրել է նաև քրեական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ անհրաժեշտ պաշտպանության իրավունքը. «Այլ թէ յանարիմաց արշաւանս առնիցեն առանց պատճառի ի վերայ քրիստոնէից եւ ի ընդդիմամարտելն սպանութիւն հանդիպի, անպարտ են...» (ԸԹ կանոն): Ելնելով անհրաժեշտ պաշտպանության իրավունքից՝ նա արդարացի և օրինական է համարում օտար նվաճողների դեմ պայքարը:

Դավթի կանոնական օրինադրությունները օգտագործվել են միջնադարյան Հայաստանում և որոշակի աղբյուր են հանդիսացել նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքի համար:

<sup>1</sup> Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 116:  
<sup>2</sup> Տե՛ս Մեծի Վարդանայ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 159:  
<sup>3</sup> Տե՛ս Ա. Աբրահամյան, Դավիթ Ալավկարդու «Կանոնները» /Ուսումնասիրություն և քննադիր/, Երևան, 1953, էջ 2 /այսուհետև Դավթի կանոնները մեջ են բերվում ըստ այս աշխատության/  
<sup>4</sup> Տե՛ս Ա. Աբրահամյան, Դավիթ Ալավկարդու «Կանոնները» /Ուսումնասիրություն և քննադիր/, «Էջմիածին», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1952, հունվար, փետրվար, մարտ, 1953: Անգլերեն թարգմանությունը տե՛ս C.J.F. Dowsett, The Penitential of David of Ganjak, Louvain, 1961:  
<sup>5</sup> Տե՛ս Մ. Չամչեանց, Հայոց պատմութիւն, հ. Գ, Երևան, 1984, էջ 41:  
<sup>6</sup> Տե՛ս C. F. Neumann, Versuch einer Geschichte der armenischen Literatur, Leipzig, 1836, s. 163.  
<sup>7</sup> Տե՛ս Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, հ. Ա, Վենետիկ, 1889, էջ 535:  
<sup>8</sup> Տե՛ս Յուզակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Հ. Յակոբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 656:  
<sup>9</sup> Տե՛ս Կ. Կոստանյան, Դավիթ վարդապետ Ալավկարդի, «Ազգագրական հանդես», ԺԴ գիրք, Թիֆլիս, 1907, էջ 105-132. ԺԵ գիրք, 1907, էջ 62-67:  
<sup>10</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Հին հուսարք կամ հեթանոսական կրօնք Հայոց. Վենետիկ, 1910, էջ 395,404,434:  
<sup>11</sup> Տե՛ս Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1970, էջ 83-85:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

- <sup>12</sup> Տե՛ս Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939, էջ 75:
- <sup>13</sup> Տե՛ս Ա. Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 227-228:
- <sup>14</sup> Տե՛ս Ա. Թովմասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1962, էջ 117-125:
- <sup>15</sup> Տե՛ս Хосров Торосян. Суд и процесс в Армении XX-III вв., Ереван, 1985, с. 31.
- <sup>16</sup> Տե՛ս Ա. Թովմասյան, նշվ. աշխ., էջ 120:
- <sup>17</sup> Տե՛ս Այստեղ Գավիթ Ալավկատրդին հետևել է V դարի հայ փիլիսոփա Եզնիկ Կողբացուն և գրեթե բառացիորեն կրկնում է բարո և չարի մասին եզնիկյան ուսմունքը: Տե՛ս Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1970, էջ 33:
- <sup>18</sup> Տե՛ս Վ. Կ. Չալոյան, Հայոց փիլիսոփայության պատմություն, Երևան, 1975, էջ 78:
- <sup>19</sup> Տե՛ս Սահակ Պարթևի կանոնախմբի Ի է կանոնը /Կանոնագիրք Հայոց, Երևան, 1964, Ա, էջ 382/: Տե՛ս նաև Կանոնը Ներսեսի և Ներշապիոյ, ԻԳ կանոն /Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 487/ և այլն:
- <sup>20</sup> Այսպես. «Տարանց հետետղացի» Ե կանոնը կնոջ ամլությունը չի դիտում իբրև ամուսնալուծության հիմք, իսկ Աթանասի ԵԹ կանոնի համաձայն՝ «շնացող է» նա «թե որ վասն ամլութեան եթող զկին իր եւ առնէ կին ծննդկան» /Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 104, 315/:
- <sup>21</sup> Տե՛ս Սահակ Պարթևի Ժ կանոնը /Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 372-373/:

Размик Марикян

Аспирант института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

*Канонические законоположения Давида Алавкаворди*

В статье обстоятельно рассматриваются вопросы, касающиеся “Канонических законоположений” Давида Алавкаворди. Данные законоположения Давида были действующим законодательным актом, о чем свидетельствуют летописцы того времени и, дошедшие до нас, многие рукописи. Доказательством того, что эти законоположения были действующим правовым актом, служат также значительное количество сохранных рукописей.

**Ключевые слова:** каноническое право, канонические законоположения, обычное право, закон, брак, преступление, наказание.

Razmik Marikyan

Phd Student of the Institute of Philosophy,  
Sociology and Law of NAS RA

SUMMARY

*The canonical statutes of David Alavkavordi*

The article extensively discusses issues related to the «Canonical Statutes» of David Alavkavordi. These statutes of David were legally binding, as indicated by the chroniclers of the time and extant in many manuscripts. The significant number of preserved manuscripts also prove that these provisions were applicable legal acts.

**Keywords:** canon law, the canonical statutes, common law, law, marriage, crime, punishment.